

Տիեզերագնացներին փրկելու, տիեզերագնացների վերադարձի և տիեզերական տարածություն արձակված օբյեկտների վերադարձի մասին

Համաձայնագիր²

Պայմանավորվող կողմերը,

նշելով, թե որքան կարևոր է «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագիրը,³ որով կոչ է արվում պատահարի, աղետի կամ արտակարգ վայրէջքի դեպքում տիեզերագնացներին ցուցաբերել ցանկացած հնարավոր աջակցություն ու ապահովել տիեզերագնացների շուտափույթ և ապահով վերադարձը, ինչպես նաև տիեզերական տարածություն արձակված օբյեկտների վերադարձը,

ցանկանալով մշակել ու տրամադրել այս պարտականությունների ավելի հստակ սահմանում,

ցանկանալով խթանել միջազգային համագործակցությունը տիեզերական տարածության խաղաղ հետազոտման ու օգտագործման ոլորտում,

առաջնորդվելով մարդկության դիրքորոշմամբ,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը տեղեկություն է ստանում, կամ երբ պարզում է, որ տիեզերանավի անձնակազմը վթարի է ենթարկվել կամ բախվել է աղետային իրավիճակի կամ արտակարգ կամ չնախատեսված վայրէջք է կատարել իր իրավագործության ներքո գտնվող տարածքում կամ միջազգային ջրերում կամ որևէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայրում, անհապաղ՝

ա) տեղեկացնում է տիեզերք արձակող մարմնին կամ, եթե չի կարող պարզել, թե ով է տիեզերք արձակող մարմինը, և անհապաղ կապ հաստատել նրա հետ, իր տնօրինման տակ գտնվող կապի բոլոր համապատասխան միջոցներով հրապարակային հայտարարություն է անում.

բ) տեղեկացնում է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որն իր տնօրինման տակ գտնվող կապի բոլոր համապատասխան միջոցներով անմիջապես պետք է տարածի այդ տեղեկությունը:

² Ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1967 թվականի դեկտեմբերի 19-ի 2345 (XXII) բանաձևով:

³ Միավորված ազգերի կազմակերպություն, *Պայմանագրերի շարք*, հատոր 610, հմ. 8843:

Հոդված 2

Եթե պատահարի, աղետի, արտակարգ կամ չնախատեսված վայրէջքի հետևանքով տիեզերանավի անձնակազմը վայրէջք է կատարում Պայմանավորվող կողմի իրավագործության ներքո գտնվող տարածքում, ապա նա անհապաղ ձեռնարկում է բոլոր հնարավոր քայլերը՝ նրանց փրկելու համար, և ցուցաբերում է ցանկացած անհրաժեշտ աջակցություն: Տեղեկացնում է տիեզերք արձակող մարմնին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին իր ձեռնարկած քայլերի և դրանց արդյունքների մասին: Եթե տիեզերք արձակող մարմնի աջակցությունը կարող է նպաստել արագ փրկելուն կամ կարող է էապես նպաստել որոնողական և փրկարարական աշխատանքների արդյունավետությանը, ապա տիեզերք արձակող մարմնինը պետք է համագործակցի Պայմանավորվող կողմի հետ՝ արդյունավետ կերպով որոնողական և փրկարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Այդ աշխատանքները պետք է ուղղորդվեն և վերահսկվեն Պայմանավորվող կողմի կողմից, որը պետք է գործի՝ սերտորեն և շարունակաբար խորհրդակցելով տիեզերք արձակող մարմնի հետ:

Հոդված 3

Եթե տեղեկություն է ստացվում կամ պարզվում է, որ տիեզերանավի անձնակազմը վայրէջք է կատարել միջազգային ջրերում կամ որևէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայրում, ապա անհրաժեշտության դեպքում այն Պայմանավորվող կողմերը, որոնք ունեն նման հնարավորություն, պետք է աջակցություն ցուցաբերեն այդ անձնակազմի համար որոնողական և փրկարարական աշխատանքներում՝ նրանց անհապաղ փրկելն ապահովելու համար: Նրանք տեղեկացնում են տիեզերք արձակող մարմնին, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին իրենց ձեռնարկած քայլերի և դրանց արդյունքների մասին:

Հոդված 4

Եթե վթարի, աղետի, արտակարգ կամ չնախատեսված վայրէջքի հետևանքով տիեզերանավի անձնակազմը վայրէջք է կատարում Պայմանավորվող կողմի իրավագործության ներքո գտնվող տարածքում կամ հայտնաբերվում է միջազգային ջրերում կամ որևէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայրում, ապա նրա անդամները անվտանգ և անհապաղ վերադարձվում են տիեզերք արձակող մարմնի ներկայացուցիչներին:

Հոդված 5

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը տեղեկություն է ստանում կամ պարզում է, որ որևէ տիեզերական օբյեկտ կամ դրա բաղկացուցիչ մաս վերադարձել է Երկիր՝ իր իրավագործության ներքո գտնվող տարածք կամ միջազգային ջրեր կամ որևէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայր, այդ մասին տեղեկացնում է տիեզերք արձակող մարմնին և Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որի իրավագործության ներքո գտնվում է այն տարածքը, որտեղ հայտնաբերվել է տիեզերական օբյեկտը կամ դրա բաղկացուցիչ մասը, տիեզերք արձակող մարմնի պահանջով և, համապատասխան խնդրանքի առկայության դեպքում, այդ մարմնի աջակցությամբ ձեռնարկում է այնպիսի քայլեր, որոնք համարում է նպատակահարմար՝ օբյեկտը կամ դրա բաղկացուցիչ մասը վերադարձնելու համար:

3. Տիեզերք արձակող մարմնի պահանջով՝ տիեզերական տարածություն արձակված օբյեկտները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք հայտնաբերվել են տիեզերք արձակող մարմնի տարածքային սահմաններից դուրս, վերադարձվում են կամ հանձնվում են տիեզերք արձակող մարմնի ներկայացուցիչների տնօրինմանը, որոնք, ըստ պահանջի, պետք է տրամադրեն նույնականացնող տվյալներ նախքան դրանք վերադարձնելը:

4. Չնայած սույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններին՝ Պայմանավորվող կողմը, որը պատճառ ունի կարծելու, որ իր իրավագործության ներքո գտնվող տարածքում հայտնաբերված կամ իր կողմից այլ վայրում ձեռք բերված տիեզերական օբյեկտը կամ դրա բաղկացուցիչ մասն ունի վտանգավոր կամ վնասակար բնույթ, կարող է այդ մասին տեղեկացնել տիեզերք արձակող մարմնին, որը, տվյալ Պայմանավորվող կողմի ուղղորդմամբ և վերահսկմամբ, անհապաղ պետք է ձեռնարկի գործուն քայլեր՝ վնասի հնարավոր վտանգը վերացնելու համար:

5. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ որևէ տիեզերական օբյեկտ կամ դրա բաղկացուցիչ մաս ձեռք բերելու և վերադարձնելու պարտավորությունները կատարելու հետ կապված ծախսերը կրում է տիեզերք արձակող մարմինը:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ «տիեզերք արձակող մարմին» հասկացությունը վերաբերում է այն պետությանը, որը պատասխանատու է տիեզերք արձակելու համար, կամ՝ այն դեպքում, երբ որևէ միջազգային միջկառավարական կազմակերպություն է պատասխանատու տիեզերք արձակելու համար, այդ կազմակերպությանը՝ պայմանով, որ այդ կազմակերպությունը հայտարարում է, որ ընդունում է սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները, և որ այդ կազմակերպության անդամ պետությունների մեծ մասը սույն Համաձայնագրի և «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագրի Պայմանավորվող կողմեր են:

Հոդված 7

1. Սույն Համաձայնագիրը բաց է բոլոր պետությունների ստորագրման համար: Ցանկացած պետություն, որը չի ստորագրում սույն Համաձայնագիրը նախքան դրա՝ սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն ուժի մեջ մտնելը, կարող է միանալ ցանկացած ժամանակ:

2. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման ստորագրող պետությունների կողմից: Վավերացման ու միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության,

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ու Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություններին, որոնք սույնով նշանակվում են ավանդապահ կառավարություններ:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հինգ կառավարությունների, այդ թվում՝ սույն Համաձայնագրով ավանդապահ նշանակված կառավարությունների կողմից վավերացման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու պահից:

4. Այն պետությունների համար, որոնց վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո, այն ուժի մեջ է մտնում նրանց կողմից վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնվելու օրը:

5. Ավանդապահ կառավարություններն անհապաղ տեղեկացնում են բոլոր ստորագրող և միացող պետություններին յուրաքանչյուր ստորագրման ամսաթվի, սույն Համաձայնագրի վավերացման և դրան միանալու մասին յուրաքանչյուր փաստաթուղթ ի պահ հանձնելու ամսաթվի, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի և այլ ծանուցումների մասին:

6. Սույն Համաձայնագիրը գրանցվում է ավանդապահ կառավարությունների կողմից՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածի:

Հոդված 8

Համաձայնագրի Կողմ ցանկացած պետություն կարող է առաջարկել փոփոխություններ կատարել սույն Համաձայնագրում: Փոփոխություններն ընդունող՝ Համաձայնագրի Կողմ յուրաքանչյուր պետության համար փոփոխություններն ուժի մեջ են մտնում Համաձայնագրի Կողմ պետությունների մեծ մասի կողմից դրանք ընդունվելուց հետո, իսկ այնուհետև՝ Համաձայնագրի Կողմ մյուս պետություններից յուրաքանչյուրի համար՝ նրա ընդունելու ամսաթվից:

Հոդված 9

Համաձայնագրի Կողմ յուրաքանչյուր պետություն կարող է տեղեկացնել Համաձայնագրից դուրս գալու մասին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց՝ գրավոր ծանուցելով ավանդապահ կառավարություններին: Համաձայնագրից դուրս գալն իրավական ուժ է ստանում այդ ծանուցումն ստանալու ամսաթվից մեկ տարի հետո:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը, որի անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն և չինարեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում ավանդապահ կառավարությունների արխիվներ: Սույն Համաձայնագրի՝ պատշաճ կերպով հաստատված պատճենները ավանդապահ կառավարությունների կողմից փոխանցվում են ստորագրող և միացող պետությունների կառավարություններին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է երեք օրինակից՝ Լոնդոն, Մոսկվա և Վաշինգտոն քաղաքներում, հազար ինը հարյուր վաթսուներե թվականի ապրիլի քսաներկուսին: